Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

19532

ԳԵՎՈՐԳ ԱՆԱՆԵԱՆ

# ՄՈՒԹ ԿԱՄԱՐՆԵՐԻ ՏԱԿ

ԴՐԱՄ. ԷՏԻՒԴ ՄԵԿ ԳՈՐԾ.

ԹԻՖԼԻՍ

5 րդ տպարան Ժ. Տ. Գ. Խ., Գոլիցը. Բաժ. Լենինի փ. № 3.

1923

Главлит № 49, Тифлис. Тираж 1000 экз.

20 JAN 2006
19 NOV 2010
1009
39272

# ՄՈՒԹ ԿԱՄԱՐՆԵՐԻ ՏԱԿ

ԴՐԱՄ. ԷՏԻՒԴ ՄԷԿ ԳՈՐԾ.

ԹԻՖԼԻՍ

Յ րդ տպարան Ժ. Տ. Գ. Խ., Գոլիցը. Բաժ. Լենինի փ. № 3.

1923

Главлит № 49, Тифлис. Тираж 1000 экз.

ՀՍԽՀ-ССР
Им. А. Мясникяна

11.02.2013 19532

# ՄՈՒԹ ԿԱՄԱՐՆԵՐԻ ՏԱԿ

## ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԷՏԻՒԴ ՄՕՏ ԱՆՑԵԱԼԻՑ

**Մեծ գործարան, մութ, խոնավ կամարներով, աջ և ձախ պատուհաններ, խարխուլ հնոց. սայլի մոտ ննջ-ում է 25 տարեկան բանվոր Հովհաննեսը. առա-վոտ է, ժամացույցը խփում է 6 անգամ. մտնում է մի բանվոր.**

*ԲԱՆՎՈՐ.* *Ինչ ես նստել և ննջում* (խփում է ուսին). *բանվորի համար կա շաբաթ երեկո, իսկ դու բարեկամս երեկ երեկոյեան ես կոնծել. աչքերդ փակվում են. վայ քեզ եթե մեքենաների առաջ էլ այդպես օրորվես.* (Դիտում է անիվները). *ըմենը մի ակնթարթում կը բարձրացնի վերև, կը կպցնի առաստաղին ու անիվների մեջ ճանճի նման կը ճխլվես...* (Դուրս է գնում).

*ՀՈՎՀԱՆՆԵՍ.* *Մենք վաղուց ենք ճխլված...* (Կարճ ժամանակից հետո մտնում է 35 տարեկան բանվոր Միքայելը).

*ՄԻՔԱՅԵԼ.* (Գործիքները կարգի է բերում). *Հովհաննես, քնած ես... Դեհ հանգստացիր, մինչև երկրորդ սուլոցը մի քանի րոպե կա դեռ ես...*

ՀՈՎՀԱՆՆԵՍ. Է՛հ, շուտով զանգակը կը տան... Քեֆից հետո, մանավանդ երկուշաբթի օրերը... Ա՛հ, եթե երկուշաբթի օրերը բոլորովին չը լինեին...

ՄԻՔԱՅԵԼ. Է՛հ, դու քեզ պահել չը գիտես... Համեստ ընկերական հյուրասիրություն էր, իսկ դու...

ՀՈՎՀԱՆՆԵՍ. Ես շատ խմեցի...

ՄԻՔԱՅԵԼ. Պետք է ասել, որ լավ ժամանակ անցկացրինք... Մի այդպիսի ընթրիք տալու համար մեր ամբողջ շաբաթվա վարձը բավական չեր լինի...

ՀՈՎՀԱՆՆԵՍ. Նա որպես վարպետ լավ վարձատրություն է ստանում...

ՄԻՔԱՅԵԼ. Ինչ վարպետ, նա էլ մեզ նման բանվոր է և ուրիշ ոչինչ. (ակնարկում է մեքենաների կողմ)... Ուզեց իր օջախում պատվել, իսկ դու չափ ու սահմանն անցար առանց ուշադրություն դարձնելու ուրիշներին... Կոնծում էիր հա...

ՀՈՎՀԱՆՆԵՍ. Ուրիշների մեջ եին Լիուսին... Աննան...

ՄԻՔԱՅԵԼ. Լիուսին, Աննան հա, հա, հա...

ՀՈՎՀԱՆՆԵՍ. Ես ինձ կորցրի... Կոնծում էի և լավ էի կոնծում... Ինչպես եմ գնացել տուն, ինչպես եմ պառկել, բոլորովին չեմ իմացել. սուլոցը զարթնեցրեց, տեսնում եմ ընկած եմ՝ առանց շորերս հանելու անկողնիս վրա. շտապով վազեցի գործարան...

ՄԻՔԱՅԵԼ. Հովհաննես, դու առաջվանը չես...



ՀՈՎՀԱՆՆԵՍ. Այս մութ պատերը հուսահատեցնում են ինձ... Ես, ես խմում եմ... Սակայն այս խայտառակ կեանքը... Մարդիկ...

ՄԻՔԱՅԵԼ. Մարդիկ, հա, հա, հա... Այսինքն բարոյական մարդիկ ինչ կասեն, հա, հա, հա...

ՀՈՎՀԱՆՆԵՍ. Այսպես անկարելի է շարունակել... Միքայել, ես չեմ կարողանում հաշտվել... Ինձ համար կեանքը անտանելի է դարձել...

ՄԻՔԱՅԵԼ. Ո՞վ է ձեռքդ բռնում... Դու ունիս ատրճանակ... Կարող ես ուղղել կրծքիդ. փոքրիկ արճիճե գնդակը բավական է որ վերջ դնի խայտառակ կեանքիդ...

ՀՈՎՀԱՆՆԵՍ. Միթե ուրիշ ելք չը կա...

ՄԻՔԱՅԵԼ. Մեզ համար է այս մռայլ և խավար արհեստանոցը... Իսկ նրանց՝ Աննայի և Լիուսիի համար փողոցը...

ՀՈՎՀԱՆՆԵՍ. Ինչո՞ւ, մեր վո՞ր հանցանքի համար...

ՄԻՔԱՅԵԼ. Կեանքը, վայելքը բաղդավորների և հարուստների համար է...

ՀՈՎՀԱՆՆԵՍ. Ուրեմն մենք պետք է հյուծվենք այս խավար և մութ կամարների տակ... Լիուսին, Աննան թափառեն անվերջ...

ՄԻՔԱՅԵԼ. Նրանց հայրը ինչպես եռանդով էր աշխատում, միշտ առաջինը...

ՀՈՎՀԱՆՆԵՍ. Ես չեմ մոռանում այն վայրկեանը՝ երբ աշխատանքի ժամանակ հանկարծ գլանի ծայրը դիպավ կրծքին և վիրավոր ընկավ հատակին...

ՄԻՔԱՅԵԼ. Նա այլ ևս չը կա...

ՀՈՎՀԱՆՆԵՍ. Իսկ մենք... Լիուսին... Աննան...

ՄԻՔԱՅԵԼ. Ջուր է նրանց գնալ—գալը, ջուր են նրանց բողոքները... Նրանցը փողոցն է միայն...

ՀՈՎՀԱՆՆԵՍ. Միքայել...

ՄԻՔԱՅԵԼ. Սովորական երևույթ. քանի դեռ տանը ծախելու իրեր կան՝ ծախում են, երբ այլևս ծախելու բան չը կա—ծախում են իրանց, վաճառվում են, դառնում են ամենքի սեփականությին... (Բանում է պատուհանը եվ դիտում)։

ՀՈՎՀԱՆՆԵՍ. Լիուսին իր նուրբ դիմագծերով, իր քնքշությամբ...

ՄԻՔԱՅԵԼ. Նուրբ դիմագծերով հա, հա, հա... Գիտե՞ս ով է նա...

ՀՈՎՀԱՆՆԵՍ. Փակիր պատուհանը...

ՄԻՔԱՅԵԼ. Գիտեմ դու շատ ես սիրում ծխից և մրից սևացած ապակիները... (Փակում է պատուհանը)։

ՀՈՎՀԱՆՆԵՍ. Միքայել, դու ծաղրում ես...

ՄԻՔԱՅԵԼ. Եթե չես ուզում, որ ես ծաղրեմ, վեր կաց, գնա հայրենի գյուղդ և ապրիր այնտեղ... Մի՞թե դու կարծում ես, որ միշտ կարող ես աշխատել... Մի գեղեցիկ օր դուրս կը շպրտեն իբրև մի անպետք իր...

ՀՈՎՀԱՆՆԵՍ. Եթե գործարանը լիներ մեր գյուղում...

ՄԻՔԱՅԵԼ. Սակայն փրկությունը այդ չի... (Դուրս է գնում)։

ՀՈՎՀԱՆՆԵՍ. (Պաուզա)... Կարճ ժամանակից հետո, ինչպես Միքայելն է ասում՝ Լիուսին



իր հրեշտակային գեղեցկությամբ պետք է դառնա զվարճության և վայելքի առարկա... Վորպիսի ծաղր... Եթե ես այժմ լինեի մեր գյուղում, լինեի ընտանիքումս... (Կանգնում է վոտի)... Իսկ Լիուսին քաղաքում... Ես առանց նրան... առանց նրան... ինչ ծանր է...

(Լսվում է սուլոց. գործարանը լցվում է բանվորներով. սկսում են աշխատել. փչում են փուքսը, գործարանը լուսավորվում է հնոցի կարմիր լույսով)։

ՄԻՔԱՅԵԼ. (Խառնում է կրակը). Երկաթը կարմրում է, դեհ բարձրացրե՛ք բազուկներդ։ (Երկաթը դնում է սալի վրա, սկսում են ծեծել։ Դիմացից վիճելով մտնում են գործարանատերը, Աննան եվ Լիուսին, կանգ. են առնում աջ կողմը. կարճ ժամանակից հետո բանվորները երկաթը դրնում են հնոցի մեջ, խոսակցությունը դառնում է լսելի)։

ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐ. Ես արդեն ձեզ պատասխանեցի. (զայրացած). միւս անգամ չըհամարձակվե՛ք մտնել գործարան... (Հովհաննեսը դուրս է գալիս խմբից, կանգ է առնում եվ ուշադրությամբ հետեվում է խոսակցությանը)։

ԼԻՈՒՍ. Հայրս ամբողջ երեսուն տարի այստեղ է ծառայել, իր կյանքը այս գործարանումն է մաշել, ձեր մեքենաների զոհ դարձել...

ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐ. Ծառայել է և դրա համար իւրաքանչիւր ամիս ստացել է իր աշխատանքի վարձը...

ԱՆՆԱ. Այդպես ուրեմն, աշխատանքը...

ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐ. Բացի այդ, երբ ձեր հայրը պառկած էր հիվանդանոցում՝ կանոնավոր ստանում էր իր ռոճիկը. այժմ բարությունս ի չարն եք գործ դնում և համարձակվում եք նույնիսկ սպառնալիքով խոսալ ինձ հետ...

ԱՆՆԱ. Բայց դուք մոռանում եք, որ հայրս ընկավ երկաթե գլանի տակ...

ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐ. Եթե կարծում եք որ իրավունք ունիք պահանջելու, գնացեք դատարան...

ԱՆՆԱ. Դատարան եք ուղարկում... Իսկ այն փոքրիկները... Անհամբեր սպասում են տանը... Քաղցած են, նրանք հաց, հաց են աղաղակում...

ԼԻՒՍԻ. Ամբողջ երեսուն տարի, երեսուն տարի... Մենք մնացել ենք փողոցում... (Բարձրաձայն լաց է լինում)։

(Բանվորները երկաթը սկսում են ծեծել։ Գործարանատերը արձանացած նայում է ինչպես Լիւսին բարձրաձայն լացով խլացնում է մուրճերի ձայնը. Հովհաննեսը ուզում է միջամտել, բայց չի համարձակվում. բանվորները երկաթը դնում են հնոցի մեջ)։

ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐ. Եթե իսկապես ձեր հայրը մնար գլանի տակ... Այդպիսի բան չի պատահել, թեթև կերպով դիպել է կրծքին միայն գլանի ծայրը...

ԱՆՆԱ. Ամենքը կը վկայեն, որ այդ դեպքից հետո հայրս ստացավ կրծքի հիվանդություն.



դուք ուղարկեցիք հիվանդանոց այն ժամանակ, երբ արդեն ուշ էր և այլևս չէր կարելի օգնել...

ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐ. Ինչպես եք համարձակվում ինձ հետ այդպես խոսել, այդ բոլորը պետք է հաստատել...

ԱՆՆԱ. Այդ բոլորը կը վկայե ինքը հիվանդանոցի բժիշկը, եթե դուք ժամանակին օգնություն հասցնեիք...

ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐ. (Զայրացած). Դուք համարձակվում եք նույնիսկ մեղադրել ինձ... Դուրս այստեղից. (դառնում է բանվորներին). դուրս արեք այս փողոցային կանանց...

ԼԻՒՍԻ. Եկ այստեղից... Այս գործարանից... Ուր հայրս աշխատել է ամբողջ 30 տարի... (Լաց է լինում)։

ՀՈՎՀԱՆՆԵՍ. Բավական չի դուրս եք վռնդում՝ փողոցային կին էլ եք անվանում... (Անցնում է Լիւսիի կողմը)։

ԱՆՆԱ. Ջուր, մի բաժակ ջուր...

ՄԻՔԱՅԵԼ. Համարձակվում եք նույն իսկ անպատվել... (Քաշվում է առաջ, բանվորները բռնում են)։

ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐ. Այդ է ձեր ճշմարտությունը...

ՄԻՔԱՅԵԼ. Մենք ձեր ճշմարտությունները կայրենք, կը դարձնենք մոխիր և կը ստեղծենք նորը, բազուկների և աշխատանքի ճշմարտությունները...

ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐ. Դու ըմբոստ ես...

ՄԻՔԱՅԵԼ. Ընկերները պետք է կարդան քո դատավճիռը...

ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐ. Եվ դու ուզում ես մնալ և աշխատել այստեղ. դուրս, դուրս գործարանիցս...

ՄԻՔԱՅԵԼ. Դուք չեք, որ պետք է հասկանաք մեր տառապանքը...

ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐ. Ձեզ մնում է հեռանալ, գնալ այստեղից... Նրանք՝ որ քաղցած և տկլոր թափառում են փողոցներում, կը փոխարինեն ձեզ...

ՄԻՔԱՅԵԼ. Ձեզանից առաջ շատերն են ծիծաղել մեզ վրա... Կը գնանք, ամենքս կը գնանք, բայց կը գանք նորից...

ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐ. Կը գաք նորից... Բայց ձեր կյանքը կը լինի նույնը, գուցե և ավելի վատ... (Դուրս է գնում զայրացած)։

ՄԻՔԱՅԵԼ. Ընկերներ, ցրվեցեք միուս բաժանմունքները և պատմեցեք այս ամենը, ինչ որ այստեղ տեսաք և լսեցիք... Դե՛հ, տղերք, ցրվենք միուս բաժանմունքները... (Միքայելի հետեվից ամենքը աղմուկով անցնում են միուս բաժանմունքները. Լիւսին ուշաթափ դրության մեջ է, Աննան եվ Հովհաննեսը աշխատում են ուշքի բերել)։

ՀՈՎՀԱՆՆԵՍ. (Խմացնում է ջուր)։ Հանգստացիր, ոչինչ չը կա, ամենքը գնացին, գործարանատերը այլևս այստեղ չէ, հանգստացիր, ես քեզ հետ եմ ամբողջ էությամբս, կյանքիս իւրաքանչիւր րոպեն, Լի՛ւսի, քեզ է պատկանում... Ահա



ես բանել եմ ձեռքերիդ, նայում եմ աչքերիդ... Դու մենակ չես... Լի՛ւսի, ես, ես քեզ սիրում եմ...

ԼԻՒՍԻ. (Ուշքի է գալի)։ Ա՜խ եթե ես հիվանդ չը լինեի...

ՀՈՎՀԱՆՆԵՍ. Ինչպես, դու հիվանդ... Ուրեմն ճիշտ է...

ԼԻՒՍԻ. Վատ հիվանդության նշաններ կան... Ես սոսկում եմ...

ԱՆՆԱ. Մեզ համար այլևս չը կա փրկություն... Դե՛հ վեր կաց, քաղաքի մութ փողոցներն ու անկյունները մեզ համար են, թող Հովհաննես, փոքրիկները տանը սպասում են... Նրանք քաղցած են... Հաց, հաց են խնդրում...

ՀՈՎՀԱՆՆԵՍ. Լի՛ւսի, դու հիվանդ ես...

ԼԻՒՍԻ. (Վեր է կենում)։ Օ՜հ, եթե ես կարողանայի տանել վրեժս... Միայն մի իրավունք ունիմ՝ մութ գիշերներին քայլելու, թափառելու և այդ իրավունքը մարդկությունն է տվել ինձ, ա՜խ... Մութ գիշերներին, փողոցներում փնտրում, որոնում եմ զոհեր, որոնք անգիտակցաբար տենչելով ինձ գեղեցիկ կնոջ կերպարանքի մեջ՝ մտնում են վայելքի ցնորքներով... Ես ոչնչացնում եմ այն ամենը ինչ որ մաքուր է և ազնիվ... Ես չար հրեշտակ եմ և այդ կոչումը իրանք են տվել ինձ... (Կարճ պաուզա)։ Դե՛հ, գնանք, գնանք, մեզ սպասում են փողոցում... (Դիմում են դեպի դուրս)։

ՀՈՎՀԱՆՆԵՍ. (Հանկարծ սթափվում է)։ Լիւսին գնում է փողոց և ես, ես ոչինչ չունիմ բա-

*ցի այս մերկ բազուկներից... Միքայել դու ի-րավացի ես... Դուրս գալ հրապարակ...* (Բաժանմունքներից աղմուկով մտնում են բանվորներ եվ լսվում են քաղաքի ձայներ զանազան կողմերից)։

ԶԱՑՆԻՐ. *Բավական է... Մենք, մենք ստրուկներ չենք... Դուրս գալ հրապարակ... Պահանջել... պահանջել... Դուրս գալ փողոց... Վոչ վոք չըհամարձակվի աշխատել...* (Գործիքներն ու մուրճերը թափում են)։

ՀՈՎՀԱՆՆԵՍ. *Տղե՛րք,* (բանվորները հավաքվում են Հովհաննեսի շուրջը), *բավական է վորքան ապրեցինք դժոխքում... Խորտակել, խորտակել այս մութ կամարները...*

ԶԱՑՆԻՐ. *Խորտակել, խորտակել...* (Հովհաննեսի նշանից ամենքը աղմուկով դիմում են դեպի դուրս, վարագույրը կամաց կամաց իջնում է)։

ՀՍԽՀ-ССР
им. А. Мясникяна

ՀՀ Ազգային գրադարան
NL0328546

ԳԻՆՆ Է 6 ԿՈՊ. ՎՈՍԿՈՎ

891.99
Ա-57